Ա. ՏԱՐԻ ԹՈՒԱԿԱՆ ՀԱՅՈՑ 18 ՕՐԱՑ 4383 — Հ. Տ 25 ՅՈՒՆՈՒԱՐ 1892 ԹԻՒ 6

ԴԱՆԱՐԻՆ

LE DANUBE

ՀԱՆԴՈՒՊ ԵՕԹՆՕՐԵԱՅ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉԱԲԱԹ ՕՐԵՐ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Ամեն երկրի համար տարեկան 12 ֆր. կամ 5 բուպլի թղթադրամ։

Պարսկաստանի համար տարեկան 8 ֆր. կամ 3 բուպլի թղթադրամ։

Փոստի ծախքը խմբագրութիւնս կը վճարէ։

—

ՊԱՅՄԱՆՆԵՐ

Ծանուցման տողը 50 սանթիմ է։ Հայերէն Պուլկարերէն եւ Ֆրանսերէն լեզուով։

Խմբագրութիւնս ղրկուած նամակ կամ գրութիւն ետ չ'տրուիր։

Նամակ եւ ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով։

M .S. TUTUNDJIEFF
Rédacteur du journal “ TANOUP »
BULGARIE ROUSTCHOUK

ՐՈՒՍՃՈՒԿ (*)

Ռուսճուկ Դանուբ գետի ափանց վրայ հիմնեալ մի քաղաք է շատ հին ժամանակայ հետէ

Քաղաքը կը նստի սարահարթի դաշտի վրայ. օդը ոչ այնչափ վատառողջ, ջուրը անհամ, Հայաստանի կլիմայի նման ձմեռը յուրա ամառը սառուցիկ տաք կլիմայ մը ունի. հողը բերրի եւ պտղատու է արդիւնաբեր ամէն տեսակ մշակութեանց, բայց միշտ մշակող եւ շինող ձեռքերը անփոյթ են գտնուած, միայն այս վերջի տարիներս տեղական իշխանութիւնն է որ կը ջանայ այս թերութիւնք լեցնել։

Ռուսճուկ Պուլկարական իշխանութեան տակ անցած օրէն սկսեալ սկսաւ ճոխանալ եւ քաղաք բառի կոչման արժանանալ, այլ շնորհիւ ունի այժմ կանոնաւոր շուկայներ քարաշէն եւ ճաշակաւոր վաճառատուններ, վաճառականներ, խանութներ, հիւրանոցներ, գրոսարաններ, հասարակաց պարտեզներ ևն ևն. եւ օր քան զօր ալ աւելի լաւերն ուռնենալ կը պատրաստուի։

Քաղաքի ամբողջ շինութեանց մեծ մասը դեռ իւր ագեղ երեւոյթով եւ ծառուտուտ փողոցներով ու ճամբաներով զինքը այցելողին անհաճոյ երեւոյթ մը կ'ընծայեն. բայց քաղաքապետութիւնը ամեն ջանք 'ի գործ կը դնէ գեղատեսիլ տունելու եւ զանոնք կանոնաւորելու. այս պատճառաւ շատեր կ'սպասեն որ արուելիք նոր ուղղութեան համեմատ նորոգեն կամ շինեն իրենց տուներն ու խանութներն։ Ռուսճուկ ըստ երեւոյթին սկիզբէ մինչեւ այժմ շնորհիւ իւր գրեթէ միշտ առեւտրական եւ վաճառաշահութեան լաւ հրապարակ մ'է եղած. այսպիսի մի երկիր գաղթելու եւ բնակութիւն հաստատելու գաղաբարը չէր կարող անշուշտ վրիպել մեր գիտող պապերու տեսութիւնից. որք անգիտակ ժամանակներէ 'ի վեր եկած հաստատուած են այս կողմերը եւ ալ աւելի յառաջանալով ամբողջ Եւրոպա շատ հաւանական է թէ ասոնք Անիի կործանման ժամանակ 60 հազար գաղթող բնակիչներու զաւակներն են, որոնցմէ 40 հազարը անցնելով Լեհաստան շինեցին Վարշաւան. որ ապա ծառայեց իրենց համար իբր գերեզմանատուն իսկ 20 հազարը ցրուեցան այս կողմերը որոնք հետ բերելով Հայի յատուկ խելքն ու հանճարն, ճարտարութիւնն ճկունութիւնն գիտեցած են տակալ այսչափ երկարեայ դարերու ընթացքում։

1481 թուին Պուլկարաց Իվան Շիշման թագա-

(*) Պատեհ առթիւ կը խոստանանք մանրամասնութեամբ խօսել նրա անցելոյն եւ ներկայի մասին։

ւորի օրով Սուլթան Պայազիտ Բ. տիրելով Պուլ-կարաց աշխարհին 396 տարի Տաճկաց իշխանութեամբ կառավարուեց 1877ին ազատութիւն գըտնելով սկսաւ կառավարուիլ իշխանութեամբ մինչ այս օր։

Բուսճուգ ունի մօտաւորապէս 6700ի չափ տուն և կը բաժնուի 10 թաղերու. մօտաւորապէս 27 հազար բնակչօք բայց 1891 տարուայ տեղական վիճակագրութեան ցանկը այսպէս կը հաշուէ։

	Մարդահամար
Արու բնակիչ ամէն աղգերէ	13431
Էգ „ „ „	12858
	26,289

	Տուն
Պուլկար	3500
Թուրք	2500
Հրեայ	350
Հայ	190
Եւրոպացի	120
	6660

Բուսճուգ առևտրական հրապարակը կը գործեն գլխաւորաբար Հայերը, Հրեայները Եւրոպացիները Պուլկարները և տպա Թուրքերը, Հայերը ամէն դասու մէջ մրցող են, ունինք առաջնակարգ Հայ վաճառականներ, վարպետ արհեստաւորներ և մի քանի պատուաբեր պաշտօնեայներ տեղական իշխանութեան ծառայութեանց մէջ։

Տեղւոյս Հայ բնակչաց բնաւորութիւնը և սովորոյթը խառն է. որոշ մի պատկեր չունին. ամէն ընտանիք իւր յատուկ կրթութեան և ընտանեկան սովորութեամբ կը կառավարուի, աւելի ճիշտն իւր քսակի ներած սահմանով, շռայլ և ցոփակեաց չեն. նոր սկսեր են նորաձևութեանց և պերճութեանց հետևիլ ընդ օրինակուելով Եւրոպացիներէ։

*
* *

Հայերս ունինք այս տեղ առ այժմ 190—200ի չափ տուն, բայց մի դար յառաջ 1000—1200էն աւելի տուն կայ եղեր. 1810ի ժամանակները պատահած պատերազմի պատճառաւ ցրուած են Մոլտաւիոյ երկիրները որպէս Ֆօքշան, Պոթուշան Եաշ ևն. և այս բնակութեանց թիւերը կը հաստատեն տեղւոյս եկեղեցւոյ բակի գերեզմանատան տապանաքարերը, որոնց վրայ կը կարդանք ընտանիքի ազգանուններ որոնք այժմ բոլորովին անծանօթ են տեղացւոյ համար։

Հայերը կը բնակին քաղքի վերի բաժնի մէջ այսինքն գետափէն աւելի բարձր դիրքի վրայ, որով Հայ բնակութեանց թաղերը աւելի մաքուր օդ կայ քան վարի մասը. Հայերու բնակութեան տեղը երկուքի կը բաժնուի Ա. Հայոց թաղ անուամբ Բ. Եկեղեցւոյ թաղ. միմեանցմէ մէկ քիլոմէթր հեռաւորութեամբ։

Եկեղեցւոյ թաղին մէջ պարապապատ շինութեան մը մէջ կը բարձրանայ Հայ եկեղեցին Ս. Աստուածածին անուամբ. Եկեղեցւոյ շինութիւնը գեղանափոր է, գեղեցիկ մակերևոյթէն երկու մէջը աւելի խոր, բայց արդէն 'ի տեղս եղած բոլոր Քրիստոնէից եկեղեցիներու ընդ ամենն գեղանափոր են, մեր եկեղեցին է որ բազդատմամբ այլ եկեղեցիներէ շատ բարձր է։

Ս. Աստուածածնայ հիմնարկութիւնը 500 տարիէ աւելի լինել կը կարծուի, այժմ ունի 150 տարուայ մի հրամարակ Օսմանեան Տէրութեան կողմանէ տուեալ որով կ'արտօնուի վերանորոգութիւնն, փայտաշէն առաստաղիւք և առանց Կամարաղեկի։ Երկաթեայ դարերէ անցնելուն և պատերազմի պատճառաւ կորսնցուցած է իւր յիշատակարանները և արտօնագիրներն, որով շատ գանձեր կորսնցուցեր է այսու հանդերձ Բուսճուգի եկեղեցին Պուլկարիոյ և Ռումանիոյ այլ տեղի Հայերու եկեղեցիներէն ամենամեծն ու վայելուչն է. և բաւական հարուստ եկեղեցական անօթներով։

Ունիմք այժմ երկու պատուաբեր քահանայներ, մին Աւագերէց Արժանապատիւ Տէր Կարապետ քահանայ Պոյաճեանց բնիկ տեղացի, միւսը Արժ. Տէր Ղևոնդ քահանայ Միքայէլեան Պուքրէշցի. Աւագերէց հայրն բարի, պատկառելի և ուսեալ մի անձնաւորութիւն է. Տ. Ղևոնդ հայրն ալ աւելի աշակերտած է Ս. Էջմիածնայ և Ս. Յակոբայ վանքերու մէջ. երկուքն ալ ժողովրդասէր և հոգածու բնաւորութիւններով զարդարուած են։ Քահանայական յատուկ եկամուտներով կ'ապրին և շատ սիրով են ժողովրդեան հետ. կրնամք ըսել թէ ահա մի քաղաք ուր եկեղեցականներու դէմ կը ռիներ և վէճեր չկան. երանի թէ մեր այլ տեղի հոգևոր հայրերն ալ սոյն օրինակ ընթացք մ'ունենային։

Մեր եկեղեցին ունի համեստ չափով կալուածներ. բայց լաւ չը տնտեսուելուն պատճառաւ օրքան զոր փճանալու և նուազելու վրայ է, յուսալից եմք որ մեր նոր սերնդեան շնորհիւ որ ազգային նախանձախնդրութեամբ տոգորուած կը յաւակնին այս հարցը չի պիտի անտեսեն այլ ջանան բարւօքել։

Եկեղեցւոյ կալուածներն են՝

2 տուն աւերակ վիճակի մէջ։

1 պանդոկ „ „ „ (ազքատ հրեաներու յատկացուած Հրէից թաղին մէջ։)

7 խանութ խեղճ երևոյթի տակ։

2 արտ մօտաւորապէս 3 հազար քառակուսի տարածութեամբ։

Ահա առանք բոլորը անխնամ և անհոգ երեսի վրայ թողուած ամիսը փոխանակ 1500 ֆր. եկամուտ բերելու այս ամենէն 150 ֆր. եկամուտ կ'ստացուի։

Եկեղեցին ունի բաւական եկեղեցական զգեստներ և անօթներ, ունի երեք հատ ընտիր ձեռագիր աւետարաններ արծաթապատ՝ այլ ոչ մագաղաթեայ. Աւետարանի Ա.ը 400 տարուան է գրուեալ է Աղթամար կղզիի մէջ Տէր Մովսէս Քահանայէ. Բ.ը 300 տարուան գրեալ է յերիզա Տէր Գրիգոր Քահանայէ. Գ.ը 200 տարուան առանց յիշատակարանի։

*
* *

Եկեղեցւոյ բակին մէջ, ազքատ երևոյթի տակ ունինք միայնակ և ցած մի դպրոց Ս. Մեսրոպեան անուամբ որ հիմնուած է 1826ին և վերանորոգուած 1868ին շնորհիւ 200 Օսմ. ոսկւոյ որ բարեհաճած է նուիրել Վսեմ. Աբրահամ Փաշա Երամեան. միջնորդութեամբ և բարեխօսութեամբ Աղթամն Մկրտչի։

Դպրոցը պրոշ ծրագրի ուղղութեամբ չի դասախօսուիր, որպէս թէ ունի վեց տարուայ շրջան. 4ը նախակրթական բաժնի համար երկուքը ուսումնական։

Կ'աւանդուին Հայերէն, Պուլկարերէն և Յունարէն (երբեմն ալ Գերմաներէն) լեզուներն. Կրօն, Աշխ. և ընդհանուր պատմութիւն, թուաբանութիւն, աշխարհագրութիւն, երաժշտութիւն և բարոյախօսութիւն։ Այս դասերը կ'աւանդուին աւելի դասագրքերու օգնութեամբ քան ուսուցիչներու հրամութեամբ։

Դպրոցը իրեն յատուկ եկամուտը չունի, և ոչ ալ աշակերտաց համար յատկացեալ տարեկոչներ, իրենց դասական ընթացքի համեմատութեամբ այլ կը հոգայուի ամբողջ ազգայնոց վրայ բաշխուած տարեկան տուրքերով զորս հոգարարձուք հաւաքել տալով յատուկ հաւաքչի ձեռամբ կը վճարեն անձնիւր պաշտօնէից։

Աշակերտաց թիւն է 103, ունի չորս դասատուներ հետեւեալ ամսական թոշակներով։

Ա. Հայ. լեզուի և ուսումնարաններու Տնօրէն դասատու կ'ստանայ 120

Բ. Հայ. և երաժշտութեան դասատու կ'ստանայ 100

Գ. Կառավարիչ և օգնական դասատու 50

Դ. Պուլկարերէն լեզուի (ուսուցչուհի) 60

գումար 330

Վարժարանի ամսական 330 ֆր. ծախուց վրայ աւելացնել մոռնալու չենք մանր մունր ծախքեր անտեսի, ջուրի ևն. ահա այսչափ խեղճ գումարով հոգացուց վարժարանի այս գումարը շատ ամիսներ շատ դժուարութեամբ կը հոգացուի։

Ուսուցիչք կազմած են դպրոցի յարկի տակ «Ս. Մեսրոպեան Ընտանեաց» անուն ընկերութիւն մը, աշակերտներէն շաբաթական 5ական սանթիմ բաժին առնելով կը հոգան դպրոցին ներքին պիտոյից. մերան, կաւիճ, սպունգ, թուղթ, գրիչ ևն։

Վարժարան յաճախող աշակերտաց ամենամեծին տարիքն է 15. փոքրինը 7, կան Պուլկարաց ժիմնազիստներ յաճախող Հայ ուսանողներ անոնք ալ միայն Հայերէն խօսիլ գիտեն, առանց կարդալու գրել և կարդալ իմանալու, Բուսճուգի արդի եւրոպատարդութեան Հայերէն գիտցողներու ընդամենն ալ այս դպրոցի աշակերտներն են։

*
* *

Բուսճուգ ունի իգական սեռի մի վարժարան Ս. Հռիփսիմեանց անուամբ. 1872ին բացուած վարձու շէնքերու մէջ։

Տեղացի Հայերու և մայրերու ցաւալի վերաբերութեան առթիւ այս վարժարանը չընծայեց մինչ այժմ մեզ քիչ թէ շատ Հայերէն կարդալ գրել կարդացող մի օրիորդ կամ տիկին, թէև բազմատամամբ իրենց մայրերու գիտեն խօսիլ և մի քիչ կարդալ ու հասկնալ, բայց առնելը միշտ իրենց ընտանեաց մէջ Թրքախօս են կան այժմ 30—55 աշակերտուհիներ զոր կ'ուսանին իբր թէ Հայերէն, Պուլկարերէն, Կրօն, Աշխ. պատմութիւն, աշխարհագրութիւն, թուաբանութիւն և ձեռագործութիւն. ունի երկու վարժուհի, Հայ և Պուլկար. Հայը կ'ստանայ 100 ֆր. Պուլկարը 80 և մի տնտեսուհի ալ 20 ֆր. ամսականով։

Այս վարժարանը կը կառավարուի 5 ազնուափայլ Տիկիններէ բաղկացեալ խնամակալաց հիներու հսկողութեան ներքև որոնց անուններն են Տիկ. Էլպիս Կ, Պապատոպլեան. Տիկ. Նեկտար Ց. հճ. Ստե-

փանեան. Տիկ. Եղիսաբէթ Գր. Գույումճեան. Տիկ. Սաթինիկ Ս. Գույումճեան և Տիկ. Միւնեվէր Ն. Քէստանեան։ Խիստ գովելի է և սերտ համակրանաց արժանի այս խնամակալուհեաց անխոնջ և անձնուէր ջանքերն, 'ի մասնաւորի Կ.Պոլսեցի Տիկ. Էլպիս Պապատաղլեանի որ երեք տարիէ 'ի վեր իւր նախանձելի հմտութեամբ և մայրական գորովով կը հոգայ ու կը հսկէ դպրոցի ներքին զարգացման, առ այս հրապարակաւ մեր ջերմ և սրտագին շնորհակալիքներն կը նուիրեմք. ու՞ր էր թէ Բուսճուգի ամէն Հայ Տիկին սոյն սիկնոջը օրինակին հետևէին և զգային աղջիկ մանկան կրթութեան մեծ պիտանութիւնը։

Հռիփսիմեանց վարժարանը իբր եկամուտ ունի 2 կրպակ և մի տուն հազիւ 40 ֆր. եկամուտ բերող, ժամանակաւ ունէր նաև 100 Օսմանեան ոսկի պարբաստ դրամ ալ, բայց չեմք կարող դիտնալ թէ այդ կլորիկ գումարը ինչ եղած է.... ուրիշ առթիւ աւելի մանրամասնօրէն կը խօսինք այս նիւթի վերայ. ծնողքները 1—3 ֆր. ամսաթաշակ պարտաւոր են վճարել. բայց այսչափով չէ կարող ապրիլ եթէ մեր ակնարկեալ խնամակալուհիներու անձնուէր ջանքերն չը լինի որ ամսէ ամիս տունէ տուն շրջելով մասնաւոր նուէրներ կը հանգանակեն և դպրոցը կը վարեն, այս խնամակալուհիներու ջանից շնորհիւ կը դաստիարակուին 20էն աւելի աղքատ աղջիկներ։

Մեզ համար անհրաժեշտ պէտք կայ երկեռվարժարանի գոյութեան մը. անշուշտ նոր ընտրելի հոգաբարձուաց ուշադրութենէն չ'պիտի վրիպի այս դիտաւոր և կարևոր կէտն։

(Շարունակելի)

ԹԻՖԼԻՍ 6 ՅՈՒՆՎԱՐ 1892

Ժամը 7 երեկոյեան

Նամակս գրում եմ մի սոսկալի անցքի տպաւորութեան ներքոյ։

Ջրօրհնեաց հանդէսներ, Թիֆլիսի Հայ հասարակութեան սիրուն ոճներից մէկը։ Ահագին բազմութիւն մօտ 15 հազար հոգւոց բաղկացած ժողովուած էր Վանաց Մայր եկեղեցին, գաւիթը և շուրջը գետի ափերի վրայ։ Որպէս զի հասկանալի լինի, նախ պիտի բացատրեմ, որ Վանաց Մայր Եկեղեցին գտանվում է Կուր գետի աջակողմեան ափին և այդ ջրօրհնեաց հանդիսի հաար ժամանակաւորապէս կամուրջ է կառուցվում, որով անցնում է հոգևոր դասը և ժողովուրդը, խաչը ջուր ձգելու համար։ Երկու օր առաջ, ինչպէս որ տեղւոյս Ռուս թերթերը յայտարարած էին, համաձայն օրինաց պահանջման քաղաքային վարչութեան կողմից եկած մասնաժողովը (ճարտարապետ, ոստիկանութեան ներկայացուցիչներ) կամուրջը քննել էր և գտել էր ամուր ու ապահով վտանգից։ Ժամը 12ին ծիսակատարութիւնը վերջացնելով հոգևոր դասը Գերապատիւ Մամբրէի առաջնորդութեամբ հետն ունենալով մի խումբ պատուաւոր անձինք հանդիսաւոր կերպով կամուրջից անցնելով եկաւ եկեղեցւոյ գաւիթը. Բոլորի երեսների ուրախութեան ժպիտ էր փայլում, որ Հայաստանեայց Սուրբ Լուսաւորիչ եկեղեցւոյ շքեղ արարողութիւններից մէկը փառաւոր է կատարվում չ'եղած ու չ'տեսնուած բազմութեան ներկայութեամբ։ Բայց այդ ուրախալի լոպէն մի այնպիսի վիշտ բերեց որ երևակայել անհնարին է։ Ցանկարծ օդը թնդաց անփոխի մի այնպիսի սարկու հառաչանքով, որ կարծես թէ երկինքը պատռուեց ու ուզեց երկիրը կլանել։ Կամուրջը չի դիմանալով ամբոխի ծանրութեանը փշրուեց և աւերուեց։ Աւերուած տեղը երկայնութեամբ կը լինի 35 ոտնաչափ և լայնութեամբ 17 ոտնաչափ։ Ջրի խորութիւնը 20 ոտնաչափ։ Մի 15 քոպէի չափ ջրի հոսանքը կարծես դադարել էր, երևում էին միայն մարդոց գլուխներ։ Տեսարանը աւելի զարհուրելի պիտի թուայ որ ամբոխի յետին մասերը բնաւ տեղեկութիւն չ'ունենալով թէ իր առաջ ինչ անդունդք է բացուած, աշխատում էր առաջ ընթանալ և նորանոր զոհեր աւելացնում։ Աղմուկք, երեխայոց և մայրերի լացը, ծնողաց ճիչը խառնուելով իրարու հետ մի ահարկու քաոս էր դարձրել։ Ծնողք որոնում էին իրանց որդւոց, որդիքը ծնողաց, եղբայրները քոյրերին և այլն օգնութիւն էին բղաւում։ արհեստաւոր դասակարգից շատերը ոտքով և ձիով օգնութեան ձեռք մեկնեցին իրենց թշուառ եղբայրներին և ազատեցին ազատել։ Մանաւանդ մեծ ծառայութիւն մատուցին տեղւոյս յայտնի լողացող պ. Դալանեանը։

Այդ պարոնը առ նուազն 10 անձ փրկեց։ Ջրի երկու ափերի վրայ մի կենդանի պարիսպ էր կանգնած տասնեակ հազարաւոր մարդկանցից և տեսնում էին թէ ինչպէս իրենց մերձաւորները զոհվում են։ Քանի որ նոր զոհեր էին հանում ամբոխի կատաղութիւնը սաստկանում էր։ Այդ միջոցին կայծակի արագութեամբ լուր տարածուեց

որ մեղաւորը Սրբազան Առաջնորդն է, որ կամուրջը չինելը յանձնել է իր մտերիմ Քահանայ Տէր Կոնստանտին Արարատեանին։ Ամբոխը հասաւ կատաղութեան ծայրին։

Զայրացած թէ ինչպէս մի Քահանայ մոռանալով իր սրբազան կոչումը աճուրդներով է պարապում և թէ ինչպէս թեմական առաջնորդը փոխանակ հմուտ ճարտարապետներ և արհեստաւորներ հրաւիրելու մի անբացատրելի յարաբերութեան մէջ է մտել իր տասրդասեալ քահանայի հետ։ Կատաղած իր տուած զոհերի համար և նկատելով հոգևորականաց ողբ վարմունքը (Քահանայք փոխանակ մնալու և ժողովրդին մխիթարելու խլկոյն հեռացան որ ջրօրհնեաց այցելութիւններ անեն) ամբոխը կամեցաւ խլկոյն իր վրէժը առնել և սկսեց փչրել առաջնորդարանի պատուհանները։ Զոհերի թիւը դեռ անյայտ է։ Մինչև ժամը 5ը հանել են 40 դիակ, չհաշուելով տասնեակ կիսամեռեալների որոնց կենդանացնելու յոյս կայ. դիակները ոստիկանութեան հսկողութեան ներքոյ են։ Մեծ մասը արհեստաւոր. 6 ուսանող ժիմնազիոնի։ Մի քանի կանայք, որոնցից մէկը գրկած է 4 տարեկան երեխային, երեք երեխայ 7—11 տարեկան ձեռք ձեռքից ամուր սեղմած։

Երեկոյեան ժամը 6ին ամբոխից մի խումբ ուներալով ձեռքին տարճանակներ դաշոյններ կրկին յարձակում արեց առաջնորդարանի վրայ, բայց ոստիկանութիւնը պաշտպանեց։ Վանայ Մայր Եկեղեցւոյ գաւիթը շրջապատուած է ոստիկաններով։ Կոնստանտին Քահանայ Արարատեանի բնակարանը նոյնպէս շրջապատուած է ոստիկաններով. իսկ Քահանան տակաւին տուն չէ վերադարձել

Ամբողջ քաղաքը ոգոյ մէջն է։

ԹԻՖԼԻՍՅԻ

---

7 Յունվար ժամը 2ին

Այս առաւօտ կրկին հանել են ջրից 14 դիակ։ Կիսամեռածներից շատերը վախճանուել են մանաւանդ երեխայք։ Այսօր ստուգուեցաւ որ քաղաքային վարչութեան կողմից եկած մանաժողովը քննելով կամուրջը հաւանութիւն չէ տուել և չէ համաձայնելիս եղել ընդունելու և յեռոյ միայն Առաջնորդի խնդրանօք յանձն է առել թոյլ տալ բանալու. այն էլ պայմանաւոր, որ անցնողները միատեղ չի գնան այլ մաս մաս 5—10 հոգւոց բաղկացած։ Հետևապէս պարզ է որ մեղքը միանգամայն ընկնում է հոգևոր վարչութեան ներկայացուցիչների վրայ։ Մոռանալով իրենց սրբազան կոչումն, առանց մի հոգացողութիւն անելու այդ լլուինները միայն զբաղուած են իրենց ստամոքին բաւարարութիւն տալու նպատակով և իրենց նիւթական բարօրութիւնը լաւացնելով։

Օրինական քննութիւնը այսօր սկսուելու է։ Թեմիս առաջնորդ Գեր. Մամբրէն, անկասկած նկատելով թէ ինչ չարիքի պատճառ դառաւ ինքը անձամբ կը հեռանայ իր պաշտօնից. քաշուելով անապատներից մէկում և այնտեղ աղօթքին նուիրելով իրեն։

ԹԻՖԼԻՍՅԻ

Ց. Գ.

Կաթողիկոսական աշխարհիկ պատգամաւորի ընտրութեան տեղը արդէն սկսուել է։

Խմբագիրներից Պ. Պ. Գրիգոր Արծրունի, Աբրահամ Յովհաննէսեան և Սպանդար Սպանդարեան ամեն միջոցին դիմում են որ ընտրուին։ Ժողովրդից աշխատում է միայն մէկը այն է ոսկէ քըսակ — Պ. Մանթաշեանը։

Ռուսահայերի համոզմունքն դէպի Տաճկահայերը, նրանց հակացողութիւնը. գործերի ներկայ վիճակը եւ թէ ինչ՞ արել են Տաճկահայերը։

Նախ քան ամենը ուզում ենք երկու խօսք ասել Ռուսահայերի այն համոզմունքի վերաբերութեամբ. որը ունին առհասարակ դէպի իրանց արիւնակից Տաճկահայ եղբայրները։ Մանաւանդ Ռուսահայերի այն դասակարգի համար, որոնք քիչ թէ շատ քաղաքավարութիւն էլ ուսնենալ կը պարտաւորին, եւ որոնք առանց նախատական մակդիրների չեն խօսում որ եւ իցէ Տաճկահայի մասին եւ ոչ խնայում են մինին կամ միւսին, բացի նրանցից որոց ֆալանի ներքեւ երկու երկայն ականջ է ժամ դալիս։

Մեզ հետ շատեր 'ի հարկէ նկատել են որ, Ռուսահայք Տաճկահայերի նկատմամբ հասուն դաղաբար չը կաղմելուց զատ, ոչ էլ հարկաւոր ծանօթութիւնը ունին նոցա հին կամ նոր խոկոպէ ֆորձոնների վերայ։ Ճիշդը ասած այսպիսի մի երեւոյթ՝ ոչ՝ մի կողմի Հայերի համար եւս պատուաբեր ու մխիթարական չի կարելի համարել։

Երկար բացատրութիւն հարկաւոր չէ, թէ, ինչի՞ց առաջ եկել է Ռուսահայերի այս անբաւականութիւնը, որը յետոյ հաւատ է դառել շատերից, եւս առաւել պընդագլխանիներին։

Ռուսահայք իրանք իրանց իրաւունք են տալիս սա՛ եզրակացութեամբ որ, պատահել են երբեմն Տաճկահայեր, որոնք՝ անծանօթ Ռուսախառն ֆրոնների ու ձեւակերպերի՝ Արեւելեան պոբշ դանդաղ կամ Ֆռանսիական ՌԷՌԼ շարժուածքներով, եւ կամ իրանց Ռուսահայերին՝ անհասկանալի Հայերէն սրախօսութիւններով անախորժ երեւացել են։ Եւ կամ թէ՝ գտնուել են այնպիսիներ, որոնք աղքատութեան, ճանապարհածախսի պակասութեան մենակին չմտածելով ժողովրդի յաւերի համար, առանց մի հոգացողութիւն անելու այդ լլուինները միայն զբաղուած են իրենց ստամոքին բաւարարութիւն տալու նպատակով և իրենց նիւթական բարօրութիւնը լաւացնելով։

Օրինական քննութիւնը այսօր սկսուելու է։ Թեմիս առաջնորդ Գեր. Մամբրէն, անկասկած նկատելով թէ ինչ չարիքի պատճառ դառաւ ինքը անձամբ կը հեռանայ իր պաշտօնից. քաշուելով անապատներից մէկում և այնտեղ աղօթքին նուիրելով իրեն։

ԹԻՖԼԻՍՅԻ

Ց. Գ.

Կաթողիկոսական աշխարհիկ պատգամաւորի ընտրութեան տեղը արդէն սկսուել է։

Խմբագիրներից Պ. Պ. Գրիգոր Արծրունի, Աբրահամ Յովհաննէսեան և Սպանդար Սպանդարեան ամեն միջոցին դիմում են որ ընտրուին։ Ժողովրդից աշխատում է միայն մէկը այն է ոսկէ քըսակ — Պ. Մանթաշեանը։

Ռուսահայերի համոզմունքն դէպի Տաճկահայերը, նրանց հակացողութիւնը. գործերի ներկայ վիճակը եւ թէ ինչ՞ արել են Տաճկահայերը։

Նախ քան ամենը ուզում ենք երկու խօսք ասել Ռուսահայերի այն համոզմունքի վերաբերութեամբ. որը ունին առհասարակ դէպի իրանց արիւնակից Տաճկահայ եղբայրները։ Մանաւանդ Ռուսահայերի այն դասակարգի համար, որոնք քիչ թէ շատ քաղաքավարութիւն էլ ուսնենալ կը պարտաւորին, եւ որոնք առանց նախատական մակդիրների չեն խօսում որ եւ իցէ Տաճկահայի մասին եւ ոչ խնայում են մինին կամ միւսին, բացի նրանցից որոց ֆալանի ներքեւ երկու երկայն ականջ է ժամ դալիս։

Մեզ հետ շատեր 'ի հարկէ նկատել են որ, Ռուսահայք Տաճկահայերի նկատմամբ հասուն դաղաբար չը կաղմելուց զատ, ոչ էլ հարկաւոր ծանօթութիւնը ունին նոցա հին կամ նոր խոկոպէ ֆորձոնների վերայ։ Ճիշդը ասած այսպիսի մի երեւոյթ՝ ոչ՝ մի կողմի Հայերի համար եւս պատուաբեր ու մխիթարական չի կարելի համարել։

Երկար բացատրութիւն հարկաւոր չէ, թէ, ինչի՞ց առաջ եկել է Ռուսահայերի այս անբաւականութիւնը, որը յետոյ հաւատ է դառել շատերից, եւս առաւել պընդագլխանիներին։

Ռուսահայք իրանք իրանց իրաւունք են տալիս սա՛ եզրակացութեամբ որ, պատահել են երբեմն Տաճկահայեր, որոնք՝ անծանօթ Ռուսախառն ֆրոնների ու ձեւակերպերի՝ Արեւելեան պոբշ դանդաղ կամ Ֆռանսիական ՌԷՌԼ շարժուածքներով, եւ կամ իրանց Ռուսահայերին՝ անհասկանալի Հայերէն սրախօսութիւններով անախորժ երեւացել են։ Եւ կամ թէ՝ գտնուել են այնպիսիներ, որոնք աղքատութեան, ճանապարհածախսի պակասութեան

եւ այլ չը գիտեմ ինչ պատճառով մի քանի ռուպլիի ծանրութիւն տալով, իրանց տածի համաձայն լաւ տպաւորութիւն չեն թողել։

Սոյանից զատ ոչ պակաս տխուր տպաւորութեան պատճառաւ դառել են նաեւ Պոլիսի թղթակցութիւններն, Հայկ՝ չը գիտեմ ո՞ր Սուլթանից Պարտ ստացող Արփիար ամիրայի մանը՝ Մշակ լրագրի մէջ։ Եւ Սուխանա-Զարեհ Շիշմանեան Մեղու-Հայաստանի լրագրի մէջ։ Էջմիածնի Ճեմարանին համար աշակերտացու ժողովոդ, եւ Պոլսից մինչեւ Այրարատ փաղոցները սերմանող Այրահամ Այվազեան Նոր-Դարի մէջ եւ ահա Եէզվիթների—Գաթոլիկութեան այս երեք ուխտաւոր վարձկանները չեն թողել ճեմարան՝ որ սեւագոյն ներկայացրած չը լինին, մինչեւ անգամ Զէյթունցի Պապիկ փաշայ ըստածին համար, որ Լուսաւորչական ծնուել ու Լուսաւորչական թաղուել, ուղեցել են Գաթոլիկ ցոյց տալ, եւ էսպէս նախապաշարել են հասարակայ կարծիքը։ Թէեւ այդ պարոններու հաշիւներն՝ իրա ժամանակին ցոյց արուել են Տաճկահայ թերթերում, սակայն. այն թերթերը Ռուսահայերի համար թէ՝ անմատչելի եւ թէ՝ անհասկանալի լինելով, նը-նրանք՝ էլի մնացել են իրանց նախապաշարեալ հաւատ մէջ. որովհետեւ բաւական է թէ՝ Ռուսահայը մի անգամ տեսնէ մի որ եւ է ցան տպագրած իրանց մամուլի մէջ, այնուհետեւ նրանց համոզմունքը փոխել շատ ու շատ դժուար է լինում «Մշակ»ը էսպէս գրել է, ասում է Ռուսահայը, սակայն փառք, հազար փառք անսահման անօրինութեանց Աստուծոյ որ պ. Հայկակ իրա՝ Խաչէ-գէնը, հազար (1000) ռուպլին՝ կոյ տալուց յետոյ, իրա նշանաւոր գ-ռանգրով ցոյց տուեց ինքզինքը, եւ սեւ երես չ'թողեց տասնեակ տարիներ առաջ զինքը մօտից ճանաչողներին։

Իսկ մենք ասում ենք էլի, այդ տեսակներից թիւը թէ կուզ տասնեակներ էլ լինին, հարիւրներ էլ լինին, թէ բազմաթիւ թէ ընտրեալ ու զրպարտողներ, դարձեալ կարելի չէ նրանցով զատապարտել մի ամբողջ հասարակութիւն—չորս միլիոն ժողովուրդ. որը ոչ խելացի, եւ ոչ էլ հասկացող մարդի գործ է։

Ո՞ր մի Տաճկահայի՝ տասնեակ կամ հարիւր հազարներ խանձել են, թող ասի եւ հաշիւ տայ ինքը, Ռուսահայը որը չարաչար կրծածուել է. իսկ թէ մի որ եւ իցէ ճանապարհածախսի, մի քանի օրուան ապրելու. կամ վրան հագնելու շորի համար են իսուում, այդ տեսակ բարեգործութիւն ու մարդասիրութիւններ աւելի շատ են անում լեռնական քուրդերը. գեղջկական թուրքերը, ամիսներով պահելով, ձրի հաց ուտացնելով, եւ ճանապարհ դցելով։

Եթէ Վանի սովեալներին օգնել են, դա մարդասիրական մի պարաք է որ կատարել են. եւ որին մասնակցել են ամեն ազգեր։ Եթէ Զէյթունի հրիզեալներին օգնել են դա՝ եւս մարդասիրական գործ է. եւ Վ. Սուլթանը ինքը մի անգամուց չնորհել է 30000 հազար ռուպլի, եւ Պոլիսի ազնիւ մասնախսումը, մի ամբողջ ժողովուրդի պաշտպանելով ճմեռուան ցրտից. քաղցածութիւնից, վերանորոգել է չորս հատ եկեղեցիներ, կեդրոնական դպրոցը եւ հազար քառասուն (1040) տուներ։ Իսկ թէ միացեալ ընկերութեանց համար են ասում, դրան օգնում են նոյնպէս ամեն ազգեր, տարեկան միայն պ-ռչէչ, եւ դաշտային հանդէսներից դուրս է գալիս 30—40000 հազար ռուպլիներ, որին մասնակցում են Եւրոպացիներ եւ նոյն իսկ թուրքերն էլ. եւ այդ պատկառելի գումարը գոյանում է իւրաքանչիւր տարի առանց Ռուսահայերի մասնակցութեամբ։

Իսկ թէ խաբերաների Ն-ն-ընէրդ հետեւացնելու կամ դասել հարկաւոր լինի, կարող ենք ասել որ Տաճկահայը աւելի ու աւելի օրինակներ ցոյց կը տայ. որոնք գեղին ու ճերմակ կոճամներով. գնդապետի սուտ կամ իրաւ սրազոտներով մեծ մեծ ազգանունների ու գերդաստանների անունով երեւացել են ու խաբել են՝ այսու ամենայնիւ Տաճկահայը դրանցով ոչ միայն չի դատապարտե ամբողջ Ռուսահայ հասարակութիւնը, այլ եւ այն ազգանունները որոնց անուամբ երեւացել են խաբերաներ, որովհետեւ ինչպէս ասացինք, ոչ մի բանիմաց մարդ չիկարող եզրակացնել մի ամբողջ ժողովուրդի համար որ թէ զանվում են եզրակացնողներ, դա՝ անիրաւութիւն է. անարդարանութիւն է, ազգային եւ մարդկային տրդաղան տեսակէտից։

*
* *

Մարդ երբ մոնում է Ռուսահայերի մէջ, եւ ծանօթանում ամեն խաւերի հետ՝ աչքի առաջ է գալիս մի կ-պ-ր-ե-լ-գ-ի-գ-ո-ր-դ-ի-ն Տաճկահայերի գործակցների եւ գործակցութիւնների մասին։ Ոչ ինչ գրեթէ չը գիտեն բուն Հայրենիքի մէջ ծնուած եւ հազար տառապանքներով սիրած ազգի եւ հայրենիքի նուիրուած ո՞ՂԿԷՆ, այլ՝ իսկապէս գործակցների վերայ, որոնք զոհել են հանգիստ. զոհել են առողջութիւն. եւ զանազան բարեբաստիկ միջոցներ, թէ՝ նիւթապէս եւ թէ՝ բարոյապէս, դատապարտուել են մահուան, բանտարկուել են ինչ երկար մութ ու խոնաւ բանտերում, բայց էլի սիրում են իրանց ազգին, էլի ուզում են գործել եւ օգտակար լինել։

Տաճկահայերը ինչպէս պաշտում են Ֆ-ռ-ա-ֆ Ֆ-ռ-ա-ն-ի-պ-ա-ն—Պ. Ռաֆայէլ Պատկանեանին, նորա բանաստեղծութիւնների համար, նոյնպէս պաշտում են Ռուսահայերը Խրիմեան Հայրիկին. ոչ միայն նորա ժողովրդական քարոզների համար, այլ ապատում են նրանից այն՝ ինչ որ նորա կարողութիւնից ու հասկացողութիւնից շատ ու շատ հեռու է։

Մենք էլ Հայրիկը սիրողներիցն ենք, եւ սակայն ո՛չ Ռուսահայերի պէս կոյր զգուարան, այլ ճանաչելով նրան շատ մօտից։ Սիրում ենք Հայրիկն իրա բոլոր պակասութիւնների հետ, եւ իրա արժանիքի սահմանին մէջ. ասոր ընդ-, ասոր ֆրէնդ ահա՝ ինչ որ նա ունեցել է իւր թարմ ժամանակին, ահա՝ Հայրիկի արժանիքը, որը եւ պիտի լինի իւր փառքի բարձրութեան յիշանիշը։

Հայրիկի երէ-ա-լ-ա-կան վերբերդ-ի երէ-ա-կ-ա-կան ազդարի տալուց չը պէտք է եզրակացնել ամեն բան, թէ կուզ փիլիսն ու վեղարն էլ տուած լինի նա։

Մեր նպատակից դուրս է բոլորովին Խրիմեան Հայրիկի պակասութիւնների համրել. որոնք որպէս մարդ սիրական կարող է ունենալ, եւ ուրախութեամբ տրտի միայն նորա առաւելութիւններն ենք յիշում։

Խրիմեան Հայրիկ, Եկեղեցեաց բէմը իրա ասպարէզ դանելով խօսիլ է շատ սուր քարոզներ, թէ եւ այն բեմբախօսութեանց մէջ էլ մեծամեծ պակասներ է գործել ասել է այն բանը ժամոլին ու հոմալին ինչ որ քաղաքական բառով գաղտնի+ են ասում, որպէս սուր զրիչ ունեցել է իւր երկասիրութիւնքն«Հրաւիրակ երկրին Աւետեաց» «Հրաւիրակ Արարատեան», «Սամուէլ —Սիրաք», «Դրախտի բնանիք», «Սանդուխտ.» ժամանակ եւ խորհուրդ իւր», Հայ գոյժ» վան գոյժ», ահա նորա գործերը։

Միեւնոյն ժամանակ Հայ եկեղեցական դասի մէջ կարող ենք ասել որ, միայն ու միայն Հայրիկ՝ իրա գործերից շատ ու շատ աւելի վարձատրուած է հայ ազգէն. բոլոր հրատարակութիւնների ծախքը ստացել է կանխիկ բարերարներից, մի անգամուց (10000) տասը հազար ռուպլի ստացել է Գալիցայ ամիրայից, Պերլին ուղարկուելիս, տաս երկու հազար (12000)ռուպլի ճանապարհածախսը տուել է Ազգը Հայրիկին, Անգլիա հասնելիս փող չունիմ ասելով գարձեալ ստացել է մեծ գումար, Պոլսում գտնուած ժամանակներում առանց Հայրիկի մեռել չէ թաղուած, առանց Հայրիկի հարուստներու պսակ չէ օրհնուած, առանց Հայրիկի ուն ու տանախմբութիւն չէ եղած Եկեղեցիներում. եւ այս ամենը ինչ եկամուտի աղբիւրներ լինելը՝ Պոլիսի եւ Տաճկաստանի կեանքի տեղեակ եղողներին միայն յայտնի է. Ինչ գ'անայս է՝ ՀՄՆԿԻՒ, գաղտնի է՝ յայտնի Ն՝ԷՐՆԵՐԷՆ՝ աշխարհի ամէն ծայրէց, եւ հէնց մինչ օրս՝ ամսական ստանում է 2500 զուրուշ, մօտ 250 ռուպլի Սրքունական գանձարանէ։ Մենք գիտնալով հանդերձ մի մախաղը, մի ցո

՝ չենք նախանձում գարձեալ այս ամենի համար, յիշելով որ «մշակը արժանի է վարձու իւրում», սակայն գտնվում են տաք արիւն չարաճճիներ որոնք հարցնում են թէ՝ Հայրիկը ինչ՞ չինել է այսքան առատ փողերով. եւ իրա վիպասանական վերարկուով ծածկել ուզում է իրա դիմողներին։

(Կը շարունակուի)

ՎԷՏԷՐԱՆ

ԱՌ ՊԱՐՈՆ Վ. ՓԱՓԱԶԵԱՆՑ

—o—

Թիւ 4 Դանուբիս մէջ Ձեզ տուած պատասխանս ուշադրութեամբ կարդացէք. հոն պիտի տեսնաք որ հայհոյութիւն չի կայ այլ փաստ։ Ձեր բացատրութիւնը (Արմենիաի Թիւ 45 Թերթին մէջ) պատասխանիս արժանի չէ. ես Ձեզ մի անգամ ընդ միշտ յայտարարած եմ որ, յեսս կուէք թերթիս դէմ Ձեր ըրած նախատինքներն. դուք փոխանակ ինձ հետ պատուաւոր մի հաշտութիւն կընքելու, ջուրէն երեր տիզմը ինկել է. այլ ես իմ նախորդ յայտարարութիւնը կրկնելու համար կ'աղաչեմ որ մի աղնիւ փորձ անէք, ապա թէ ոչ կամ թերթիս մէջ կամ մասնաւոր պրոշիւրով պիտի հրատարակեմ։ 18... թուականին Էջմիածնայ Գէորգեան ճեմարանի Բ. դասարանէն Ձեր եղբօր պ. Գրիգորի հետ ....ուենիդ Անդրէաս Եպիսկոպոսի տեսչութեան օրով. իրական պատմութիւնը մանրակրկիտ կերպով եւ փաքթերով, նմանապէս Ձեր յոժարութեամբ եւ ընդունելութեամբ՝ մարդկութեան Ձեզ յանձնած մի նուիրական առանդը ծախել ու նորը գնելու փափաքիդ պիտի ծանօթացնեմ այն ժողովուրդին որ Ձեր այժմեան դէքն աւելի բարձր կերպով կ'ուզէ վարձատրել զՁեզ։ Ռուսահայոց պէս ես ես խաբուած էի Ձեր նկատմամբ, այլ Պարսկաստանէ, Տաճկաստանէ, Ռուսաստանէ վերջապէս այն ամէն տեղերէ ուր կեանք ունենալով սխալ հեռաքեր թղթած է ընդարձակ նամակներ հասած են ձեռքս. վատ անցեալ մ'ունենալը անտանելի է այլ կարելի է զայն մոռցնել տալ ժողովրդեան լաւ գործեր ցոյց տալով, դուք այդ առաւելութիւնը պիտի ունենաք, բայց երբ ինձ նմաններու հետ չափուելու համար հայհոյութեանց ասպարէզը (Արմենիա) կ'իջնէք ձեռքերիդ գտնուած առատ երութիւնը կը կորուսէք, յաւ չէք աներ... այս անգամ՝ այս չափ։

Մ. Թ.

ԽՈՐԷՆ ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ՓԻԼՕՆԱԶՈՒՐԿ

Ցաւօք սրտի կ'իմանամք որ Պոլսոյ Ազգ. Պատրիարքարանը կամ Ամեն. Սրբ. Պատրիարքը, փիլոնազուրկ արել է զԽորէն Սրբազան Արքեպիսկոպոս Լուսինեան. այս մասին չեմք ուզեր այժմէն պարզել մեր հայեացքը. պիտի սպասեմք որ մեր Պոլսոյ թղթակիցը պէտք եղած տեղեկութիւններն հաղորդէ մեզ եւ ըստ ամենայն սկսիմք գրել. Լուսինեան սրբազանի նկատմամբ մեր ունեցած հաւատքը շատ մեծ է. հետեւարար այս լուրը զմեզ շատ կը վշտացնէ. երանի թէ մեր սոյն վիշտը 'ի մօտոյ անհետանայ. յոյսերնիս չեմք կորած. այլ մեր ընթերցողներն թող հաւատի լինին որ այս մասին լոկ ճշմարտութիւններ պիտի գրեմք առանց թեւադրուելու մեր հաւատքէն զոր ունիմք առ Լուսինեան սրբազան. այս առթիւ կը յայտնեմք որ, այն անձինք որք վշտացել են մեզ դէմ Խրիմեան սրբազանի նկատմամբ մեր հիւրընկալած մի յոդուածէն, պէտք է համոզուին որ մեզի համար անձի նուիրականութիւն չի կայ, մենք ճշմարտութենէ կը թեւադրուինք. քան կոյր հաւատքէ հետեւաբար

կը գրեմք այն բաներն որք եղած են. մեր թերթը թարգման է հասարակաց կարծեաց և ոչ թէ մեր անձնական կրքերու կամ շահ արտադրիչ ուղղութիւններու ասպարէզ. Նոքա որք մեր ընդուն կը ծու կը գտնեն թող հաւատան որ անկեղծութեան յուշարար է։

Մ. Թ.

ԱՅԼ ԵՒ ԱՅԼԲ

—:—

Թիֆլիզի տեղական Հայ թերթերէ կը քաղենք հետեւեալը.

Թիֆլիզի թեմական վիճակաւոր առաջնորդի կարգադրութեամբ սկսած են կատարել Կաթողիկոսական թեմական պատգամաւորի ընտրութեան համար նախապատրաստական ընտրութիւններ։ Ամսոյս 26 ին ընտրութիւն պիտի կատարուի Վանքի, Մողնու, Զգրաշէնի, Ս. Նշանի, Ս. Գէորգի, Զրկենենց, Քամոյենց, Բեգդեհեմի, Վերայի Ս. Խաչ, Հրեշտակապետաց, Նորաշէնի, եւ Ս. Սարգսի Քարափի Եկեղեցեաց մէջ, իսկ Փետրուարի 2—ին, ընտրութիւն պիտի կատարուի Թանդոյենց Կուկիոյ Նորաշէնի, Զուզուբլթի, Ս. Կարապետի, Շամքոռեցոյց, Էջմիածնեցոյց, Ս. Մինասի, Զորաբաշի, Լուսաւորչի եւ Նաւթլուղի եկեղեցեաց մէջ։

Իւրաքանչիւր եկեղեցիի մէջ կ'ընտրուին երեք—երեք պատգամաւորներ։ որոնք հաւաքուելով առաջնորդարանի մէջ իրենց մէջէ պիտի ընտրեն թեմական մի պատգամաւոր։

Պարսից Վեհափառ Շահը նորերս դյուրինութեան օրէնք է հաստատել Թէհրանի մէջ լոյս տեսնող Հայերէն եւ Ռուսերէն դրուածների համար։ Այս պաշտօնը յանձնուած է տեղւոյն տպարանատէր Պ. Անդրէաս Բէգնազարեանցին։

ՄԵԾ ՊԱՐԱՀԱՆԴԷՍ

Ի ՆՊԱՍՏ ՏԵՂԻՈՅՈ Ս. ՀՌԻՓՍԻՄԵԱՆՑ ԻԳԱԿԱՆ ՎԱՐԺԱՐԱՆԻ

—.—

Տեղւոյս իգական վարժարանի Ազ. խնամակալութիւնք վաղը երեկոյ մի պարահանդէս պիտի տան 'ի Նպաստ վարժարանի. Հայոց թատրն տեղւոյս եւ բնակիչներէն Մեծ. Յակոբ հճի. Սահակեանեանի տան նը պահին մէջ. ուր մասնաւորապէս հրաւիրեալ են քաղաքիս Վ.սեմ. Կուսակալն և Վ.սեմ. Քաղաքապետն, և այլ բարձր պաշտօնեայք և ազնուականք. յուսով ենք թէ արդիւնքը գոհացուցիչ կը լինի։ Եւ մեծ պատիւ կը բերէ Ռուսճուգի գաղթականութեան. 'ի մասնաւորի Ազն. խնամակալուհեաց որոնց ջանքերն գովելի է յոյժ։

ՏԵՂԱԿԱՆ

Տեղականընդհանուր վարժարանաց Մեծ. Տեսչի կողմանէ 20 Յունվար թուականաւ մի պաշտօնական հրամանագիր գրկուած է ամեն ազգայ վարժարանների Հոգաբարձութեանց որ բակեն վարժարանները և չի դասախօսեն աշակերտաց Էնֆլէ-էնցա հիւանդութիւնը ճարակուելու 'ն պատճառաւ. մինչև 28 Յունվարի։

ԷՆՖԼԻԷՆՑԱ ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԻՐ ԴԱՐՄԱՆԸ

—.—

Էնֆլէ-էնցա, անունը կրող այս վնասակար անկոչ հիւրը բաւական տարածուած է մեր քաղաքի մէջ եւ թէ շրջակայքը. բազմաթիւ ընտանիքների մէջ մի երկու հոգի առ նուազն էնֆլէ-էնցա՝ բռնուելով անկողնոյ կը ծառայեն եւ երբեմն ալ կը գաղթեն անդիի աշխարհ. եւ կամ 5—6 օրէն կը դարմանուին։

Նախ եւ առաջ կ'սկսի հիւանդութիւնը բարակ մի գըլխացաւով եւ մի քիչ հազալով. աչքերը մի քիչ արեամբ կը լեցուի, եւ ջերմութեան աստիճանը 39էն մինչեւ 41 կը բարձրանայ։ Երկրորդ օրը հիւանդը ամբողջ մարմնոյ ոսկորների մէջ սաստիկ ցաւ կ'զգայ եւ հազալը աւելի կը սաստկանայ, ուստեղու ախորժակը կը գոյանի բոլորովին, եւ ուժասպառ կը լինի, գիշերը կ'անցնէ առանց քընանալու, անհրաժեշտ է բժշկական դեղագրով ստանալ թմրեցուցիչ դեղ մը գիշերը հանգիստ անցնելու համար։

Էնֆլէ-էնցա՝ դարմանը.— Անհրաժեշտ է առաջին օրէն 20 աստիճան ջերմութիւն ունեցող սենեկի մէջ պառկել, լուծողական մի դեղ առնուլ huile de Ricin (հինտ եաղի) 3—12 տարեկան հասակ ունեցողի մը համար. 20 կրամ. իսկ չափահասների համար 35—40 կրամ։ Երեկոյին ամբողջ մարմնոյն քսել Alcool Camphre (քեաֆիրի բուհու) եւ միեւնոյն ժամանակ առնուլ մէկ կրամ Antipyrine երկու անգամով. եւ հետեւեալ առաւօտուն ալ անպատճառ առնուլ Sulf. de quinine (սոլֆաթ) մէկ կրամը երկու մասի բաժնել մին առաւօտուն եւ միւսը երեկոյին. կամ եւ մսի ջուրէ զատ ոչինչ չ'առնուլ, այս կերպով անվտանգ կը դարմանուի էնֆլէ-էնցա՝ բռնուողը առ առաւելն 5—7 օրից. իսկ եթէ հակառակ սոյն դարմանաց եթէ տեսնուի որ հիւանդը օր ըստ օրէ վատ դրութեան մէջ կը գտնուի, անմիջապէս հարկ է որ բժիշկ մը կոչել եւ դարման տանել հիւանդին։

ՏԷՐ ԵՒ ԽՄԲԱԳԻՐ Մ. Ս. ԹԻԹԻՆՃԻԷՖ

ՐՈՒՍՃՈՒԳ ՏՊԱՐԱՆ Մ.Ս. ԹԻԹԻՆՃԻԷՖԻ

Скоро-печятницата на Спиро Гулабчъв